ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՍՊՈՐՏ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
24	ՕՎԵՐ ՓԼԵՅ	Մարմնամարզական հավաքածու կուլտուրիզմի Նախատեսված 32-36 տեսակի մարզումային վարժությունների համար: Երկաթյա հիմքով, պատրաստված է բարձրորակ՝ չժանգոտվող մետաղից, փոշեներկված է, ունի բազմակի վարժություններ կատարելու հնարավորություն, քառակուսաձև հենքային կառուցվածքով , 6 հատ ոտքերով, ունի նվազագույնը 250 կգ կշռաքարեր, 4 հատ ճոպաններով 3 կողմից ձգելու հնարավորությամբ: Մարզասարքի ընդհանուր քաշը առանց ծանրամարտի նստարանի նվազագույնը 455կգ, նախատեսված կոմպլեքս վարժություններ կատարելու համար: Նվազագույնը 6 կետով հենվում է հատակին, ունի ռետինային հենակներ: Կողային զույգ հենարաններին ամրացված են լազերային զարդանախշ կտրվածքներով հենքին ամրություն և գեղեցկություն տվող հաստ մետաղական թիթեղներ: Ուղղահայաց հենարաններից մեկին առկա է շարժական նստարան՝ սպունգային ծնկակալներով, նախատեսված ոտքերի վարժությունների համար: Նստատեղը և ծանրամարտի նստարանը պատրաստված են բարձրորակ կաշվին փոխարինող հումքից և փափուկ սինտիպոնե միջուկից: Վարժասարքը ունի առնվազն 4 գլորանիվային-ճոպանային համակարգեր, որոնք համակցված են ծանրաքարին՝ քաշերի փոփոխման մեխանիզմով: 2 հատ ճոպանային համակարգը շարժական է՝ վերևից ներքև, տարբեր բարձրություններում ֆիքսելու

		հնարավորությամբ, ունեն զույգ գլանային կառուցվածք, մետաղական ճոպանները պոլիմեռապատ են, ծայրակալները ամրացված են ամուր ռետինային ՛՛կանգառներով՛՛ : Մարզասարքին ամրացված են մեկական երկար (60-70սմ) և կարճ (45-50սմ) տեսակների բռնակներ, և մեկ զույգ եռանկյունաձև բռնակներ, որոնք ունեն մետղական կապիչներ: Բռնակները պատված են բարձրորակ, ամուր, չսահող ռետինային հումքով: Վարժասարքը ունի 1 հատ ծանրաձողի և 6 հատ ծանրաքարերի ամրացման համար նախատեսված չժանգոտվող պողպատից պատրաստված կախաններ: Վարժասարքի մի կողմում հենքին հորիզոնական դիրքով ամրացված է շարժական (բարձրության փոփոխում) ծանրաձողի հենարան և ծանրամարտի նստարան ` պառկած վիճակում ծանրաձողով վարժությունների համար: Ունի ձգումների համար նախատեսված շարժական, լիսեռային կախոցներ, ձոռքի դաստակների տարբեր առանցքներում ֆիքսելու հնարավորությամբ: Կախոցները մետաղական հումքերից: Լրակազմում առկա է նաև գործիքների հավաքածու (քանդման և հավաքման համար): Մատակարարը իր հաշվին պարտավոր է իրականացնել՝ - մարզասարքի տեղադրումն ու կոմպլեկտավորումը մարզադահլիճում, յուղումը, փորձարկումը, - շահագործման երկու տարիների ընթացքում վարժասարքի տեխնիկական սպասարկումն ու խնամքը (ըստ պատվիրատույի պահանջի, առնվազն տարեկան 2 անգամ), - անորակ դետալների բացահայտման, շարքից դուրս գալու դեպքում, նոր և լավորակ տեսակներով փոխարինումը: Մարզասարքի մակարդակը պրոֆեսիոնալ: Գնորդի պահանջով մատակարարաը գնորդին է ներկայացնում ապրանքների պրոֆեսիոնալ կարգավիճակը հաստատող հավաստագիր (Сертификат) և երաշխավորագիր՝ շահագործման 2 տարիների ընթացքում՝ տեխնիկական սպասարկման վերաբերյալ: Փաթեթավորումն ու պիտակավորումը՝ գործարանային:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СПЛАЙ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ՍՊՈՐՏ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
24		